ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 22

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Ք. Երևան

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ նիստ) կայացավ 2022թ. ապրիլի 22-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 համաձայն Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի անդամ, քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածի 4.01, 4.02 կետերով, 5-րդ հոդվածի 5.01 կետով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածի 21.04 կետով, 28-րդ հոդվածի 28.01 կետով, օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **15/04/2022թ. «Արարատ-Արմենիա»-«Արարատ» (ՊԼ-133) հանդիպման 59 րոպեին տեղի ունեցած իրադարձության հիման վրա.**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Արարատ» թիմի մարզիչ Ալեքսանդր Պետրոսյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ Կանոնակարգի 4-րդ

հոդվածի 4.05-րդ կետը և 40-րդ հոդվածի 35-րդ կետը՝ Ալեքսանդր Պետրոսյանին որակազրկել 2 խաղով և «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000 ՀՀ դրամի չափով։

2) Հաստատված համարել Խուան Դավիդ Բրավո Պադիլլայի (ՀՖՖ ID 34252) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 35-րդ կետը՝ Խուան Դավիդ Բրավո Պադիլլային (ՀՖՖ ID 34252) որակազրկել 1 խաղով և «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով։

2. 17/04/2022թ. «Փյունիկ-2-08»-«Արարատ-1-07» (15Բ-046) խաղի ընթացքում «Փյունիկ» ֆուտբոլային ակումբի մարզիչ՝ Եղիշե Մելիքյանի (որպես երկրպագու) կողմից ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու համար։

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել Եղիշե Մելիքյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ Կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.05-րդ կետը և 40-րդ հոդվածի 35-րդ կետը՝ Եղիշե Մելիքյանի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն», «Փյունիկ» ֆուտբոլային ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի՝ 150.000 ՀՀ դրամի չափով։

3. 16/04/2022թ. «Վան»-«Ուրարտու» (ՊԼ-135) հանդիպման նախախաղային ժողովին Վան թիմից ներկա չէին գնդակ մատակարարող երեխաների մարզիչը և անվտանգության պատասխանատուն։

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Վան» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 22-րդ կետը՝ «Ֆուտբոլային ակումբ Վան» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն» և տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով։

4. 20/04/2022թ. «Փյունիկ»-«ԲԿՄԱ» (ՊԼ-140) հանդիպման մասին
1) Հանդիպման հետխաղյա մամուլի ասուլիս չի կայացվել։
2)Հանդիպման երկրորդ խաղակեսում VIP օթյակի տարածքից իրականացվել է ֆոտո/վիդեո նկարահանում։

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 12-րդ հոդվածի 12.03-րդ կետով՝ վարույթի հարուցումը մերժել։

5. 09/04/2022թ. «Շիրակ»-«Ուրարտու-2» (ԱԽ-081) մարզադաշտի ցուցատախտակը չի աշխատել ողջ հանդիպման ընթացքում։

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Շիրակ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 81-րդ կետը՝ «Շիրակ» ֆուտբոլային ակումբի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

6. **19/04/2022թ. «Շիրակ»-«Գանձասար ՖԱ» (ԱԽ-090) հանդիպման ընթացքում թիմերի անվանումով և հաշիվ ցույց տվող լուսատախտակը չի գործել:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Շիրակ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 81-րդ կետը՝ «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի՝ 30.000 ՀՀ դրամի չափով:

7. **18/04/2022թ. «Փյունիկ Ակադեմիա»-«Արարատ-Արմենիա-2» (ԱԽ-092) հանդիպման ժամանակ մարզադաշտում առկա չէր ՀՖՖ դրոշը:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Փյունիկ Ակադեմիա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 45-րդ կետը՝ «Փյունիկ Ֆուտբոլային ակումբ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

8. **20/04/2022թ. «Ալաշկերտ-2»-«Լեռնային Արցախ» (ԱԽ-091) հանդիպման նախախաղային խորհրդակցության ժամանակ գնդակ մատակարարող պատանի ֆուտբոլիստների քանակը չէր համապատասանում սահմանված կարգին:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Ալաշկերտ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 81-րդ կետը և ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 25-րդ հոդվածի 25.24-րդ կետը՝ «Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի՝ 30.000 ՀՀ դրամի չափով:

9. **17/04/2022թ «Աչաջուր-07»-«Արարատ-Արմենիա-07» (15A-047) հանդիպման 70-րդ րոպեին Արարատ-Արմենիա-07 թիմի մարզիչ՝ Հենրիկ Բերբերյանի կողմից ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Արարատ-Արմենիա-07» թիմի մարզիչ Հենրիկ Բերբերյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ Կանոնակարգի 44-րդ հոդվածի 16-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա-07» թիմի մարզիչ Հենրիկ Բերբերյանին որակազրկել մինչև 2021-2022թթ մրցաշրջանի վերջ՝ 2022 թվականի հունիսի 30-ը, «Արարատ-

Արմենիա-07» թիմի նկատմամբ կիրառել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Արարատ-Արմենիա Ֆուտբոլային Ակումբ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով:

10. **17/04/2022թ. «Արարատ-05»-«Նորք-04» (18Բ-051) հանդիպման 64 րոպեին տեղի ունեցած իրադարձության հիման վրա:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Նորք-04» թիմի մարզիչ Ռաֆայել Ղազարյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ Կանոնակարգի 44-րդ հոդվածի 28-րդ կետը՝ Նորք-04 թիմի մարզիչ Ռաֆայել Ղազարյանին որակազրկել 2 խաղով և «Նորք» Ֆուտբոլային ակումբ ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

11. **14/04/2022 «Շիրակ»-«ԲԿՄԱ» (ԱԽ-088) հանդիպման ժամանակ տեղի ունեցած իրադարձության հիման վրա:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Շիրակ» թիմի ֆուտբոլիստ Արտյոմ Միքայելյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ Կանոնակարգի 41-րդ հոդվածի 17-րդ կետը՝ «Շիրակ» թիմի ֆուտբոլիստ Արտյոմ Միքայելյանին որակազրկել 2 խաղով և «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկի՝ 250.000 ՀՀ դրամի չափով: